

ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՆՈՐԵՐ ՄԱՑՐ ՀԱՅՐԵՆԻՔԵՆ[1]

գ) ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՃԱՐՏԱՐԱՐՎԵՍՏԸ

Ինչպես առհասարակ սովետական աշխարհի մարդիկ, նույնպես և սովետահայ մարդը՝ կմարմնացնե մեր օրերու homo faber*-ը, շինող մարդը, իր ամենաամբողջական իմաստով։*

Մեր Հայրենիքը՝ Սովետական Հայաստան, իր ճարտարարվեստով մանավանդ՝ այդ շինող մարդոց մտքի և բազուկի ստեղծագործությունն է։

Հայտնի է, թե 1920-են առաջ, Հայաստանի սեփական ճարտարարվեստի արտադրությունները նմուշները հանգիստ կերպով կրնային սեղմվիլ կոմի-վուայաժյորի մը վերարկուի գրպաններուն մեջ։ Այսօր, երեսուն տարիներե վերջ, Սովետական Հայաստանի արդյունաբերության նմուշները փոխադրելու համար պետք պիտի ըլլային բազմաթիվ ապրանքատար վագոններ։ Նույնիսկ Սովետական Միության մեջ Հայաստանը բացառիկ տեղ մը կգրավե այս տեսակետեն։ Մինչ վերջին հնգամյա ծրագրին մեջ նախատեսված է 50%-ի աճում մը Սովետական Միության ճարտարարվեստի արտադրության, Սովետական Հայաստանի համար նախատեսված աճը 100% է։

Բավական է թվել միայն ճարտարարվեստի ճյուղերը, համոզվելու համար թե ի՛նչ անհավատալի չափերու հասած է մեր Հայրենիքի արդյունաբերությունը իր բազմապիսությամբ, իր քանակով ու իր որակով։

Ո՛վ կրնար հավատալ 20—30 տարի առաջ, թե Հայաստանը կրնա ճարտարարվեստական երկիր մը դառնալ, թե կրնա գրեթե ինքնաբավ ըլլալ, թե կրնա իր արտադրած ապրանքները արտածել, թե կրնա էլեկտրաշինարարության հսկա մեքենաներ հայթայթել քույր հանրապետություններու։

Ինչ որ անհավատալի կթվեր մոտակա անցյալին, այսօր պայծառ իրողություն է։

Անձամբ տեսա ու շոշափեցի մեր երկրի արդյունաբերության նմուշները, Երևանի մեջ բացված՝ Սովետական Հայաստանի ճարտարարվեստին նվիրված շքեղ ցուցահանդեսին մեջ։

Կհրավիրեմ իմ ընթերցողը, որ մի քանի ակնարկ մը նետենք արդի հայ ճարտարարվեստի արտադրություններուն վրա։

Սկսինք մթերային (ուտեստեղենի) արդյունաբերութենեն։

Հայաստանը պահածո մթերքներ արդյունաբերող մեծ կեդրոն մըն է այսօր։ Բազմաթիվ գործարաններ օրնիբուն կգործեն մսի, ձկան, պտուղներու, անուշեղեններու և բանջարեղեններու ընտիր պահածոներ պատրաստելով, որոնք մեծ քանակությամբ կարտածվին։ Բացառիկ տեղ մը կգրավեն իշխան ձուկի, համբավավոր դեղձի, ծիրանի և ընկույզի պահածոները։

«Արարատ» տրեստը կարտադրե տասնյակ տեսակ գինիներ, կոնյակ, գարեջուր, լիկյորներ և շամպանիա։ Լիկյորը և շամպանիան նորագույն արտադրություններ են, որոնց սպառումը օրեօր կաճի ու կտարածվի ամբողջ Սովետական Միության մեջ, իրենց ընտիր հատկություններուն համար։ Այս ըմպելիներու շարքին կարելի է հիշել նաև առատ արտադրությունը լիմոնադի, որով ողողված է Երևանի հրապարակը և անպակաս է որևէ Երևանցիի սեղանեն։ Գոց շիշերու մեջ, շատ հաջող պատրաստված հյութեղ լիմոնադներ են՝ լիմոնի, նարինջի, խնձորի, հոնի, կրեմ-սոդայի, մատչելի ամեն քսակի համար։ Ամբողջ շիշը ոչ իսկ մեկ ռուբլի

1. Շարունակված ամսագրի 1951 թվի սեպտեմբեր-հոկտեմբեր համարից։

կարժե։ Երևանցիներու սեղանեն անպակաս է նաև Հայաստանի հանքային ջուրը՝ Արզնի, Դիլիջան կամ Ջերմուկ։ Ջերմուկը մանավանդ, որ վերջերս հայտնաբերված է, սկսած է համբավ շահիլ որպես բացառիկ բուժիչ հատկություններ ունեցող «թթու ջուր», մանավանդ ստամոքսի և լյարդի հիվանդության համար։

Ճարտարարվեստ մըն ալ կզարգանա՝ շոր մսեղեններու, երշիկներու, ապուխտներու, ինչպես նաև շոր պտուղներու։

Հայտնի են նաև կաթնեղեն արտադրությունները՝ կարագ յուղի, պանիրի, շվեյցարական և հոլանդական տիպի պանիրներու, ռոկֆորի և այլն, որոնք կրնան մրցիլ այլ երկիրներու ամենալավ նման ապրանքներու հետ։

Երևանի մեջ կտեսնվին բազմաթիվ մեծ ու մաքուր խանութներ, որոնք կվաճառեն մոտ քսան տեսակի հացեր, հացիկներ և բիսկուիներ, տասնյակ տեսակ հրուշակեղեններ, գաթաներ, տորթեր, իսկ ուրիշ խանութներ շքեղորեն զուգված, հաճախորդներու կհրամցնեն Հայաստանի կոնֆետի գործարաններու բարիքները՝ շոկոլադներ, բոնբոններ, կարամելներ՝ բազմաթիվ տեսակներով։

Հայաստան ունի նաև մակարոնի և նման ապրանքներու գործարաններ, որոնք լիովին կբավարարեն ներքին սպառումի պահանջը։

Բացառիկ կերպով կարժե նշել ձեթ-օճառի կոմբինատը՝ իր լավ զված ձեթով և ընտիր օճառի տեսակներով։ Վերջին տարիներուն, Հայաստանի օճառները կմրցին լավագույն օճառներուն հետ, մանավանդ իրենց առողջապահական հատկություններով։ Նշանավոր է մանավանդ հավկիթօճառը և երեխաներու համար մասնավոր պատրաստված օճառը։

Ծխախոտի ճարտարարվեստը, այս վերջին

Բենակելի նոր շենք Աբովյան փողոցի վրա

շրջանին սկսած է արտադրել ավելի բարձրորակ ապրանքներ, գեղարվեստական ճաշակով պատրաստված տուփերու մեջ, ինչպիսին են «Մասիս»ը, «Մայիս 1»ը, «Սասունցի Դավիթ»ը, «Հոբելյանական»ը և այլն։

Սովետական Հայաստանի համար նոր ճարտարարվեստ մըն է դեղորայքի արդյունաբերությունը, որ արդեն որոշ տեղ մը կգրավե երկրի ընդհանուր տնտեսության մեջ։ Լենինականի մսի կոմբինատի կողքին հաստատված դեղորայքի գործարանը հաջողած է նույնիսկ պենիսիլին արտադրել, որուն նմուշները ես տեսա վերոհիշյալ ցուցահանդեսին մեջ։

Մթերայինեն վերջ, անցնինք հյուսվածեղենների արդյունաբերության ճյուղերուն։

Հանրածանոթ են Լենինականի հռչակավոր մանարանները ու կտավի գործարանները, որոնք ապրանք կմատակարարեն, մեծ չափերով, ամբողջ Սովետական Միության։ Բացի այս գործարաններեն, որոնք բամբակը կմանեն ու կհյուսեն, Հայաստան այժմ ունի նաև հայտնի մահուդի գործարանը, որ բուրդն կերպաս կպատրաստե բավականին լավ որակով։

Մեծ զարգացում ստացած են նաև տրիկոտաժի, գուլպայի, ինչպես նաև պատրաստ հագուստ արտադրող գործարաններն ու արտելները։ Երևանի խանութները լեցուն են նման ապրանքներով, շատ մատչելի գիներով։

Առանձին և պատվավոր տեղ մը կգրավե անշուշտ գորգաշինությունը, որ նոր ծաղկումի մը հասած է այսօր։ Հայաստանի մայրաքաղաքին մեջ կարելի է տեսնել մեկեն ավելի հատուկ վաճառատուներ, որոնք հայկական շքեղ և տոկուն գորգեր կվաճառեն։

Մետաքսը, թեև մեր երկրի հին արտադրություններեն մեկն է, սակայն միայն այսօր կարելի է խոսիլ՝ բառին բուն իմաստով՝ ճարտարարվեստի մը մասին։ Ոչ միայն շերամաբուծությունը լայն կերպով զարգացած է, այլ հիմնված են գործարաններ, որոնք մետաքսյա կերպասներ կպատրաստեն կանացի հագուստներու համար՝ գեղեցիկ գունավորումներով, որ կրնան գոհացում տալ ամենանուրբ ճաշակներու։ Կրեպ դը շին, կրեպ սատեն, վուալ ժորժետ, մարկիզետ, և այլ նման մետաքսյա հյուսվածքներ, լավ որակի, կարելի է միշտ գտնել Երևանի հրապարակին վրա, և վաճառողը հպարտությամբ կհայտնե՝ «Սա՛ մեր արտադրությունն է, համեցեք, թանկ էլ չի»։

Կարելի չէ անտեսել կաշեգործությունը, որ շատ լավ որակի կաշիներ կգործե, և կոշիկի ճարտարարվեստը՝ որուն համբավը տարածված է արդեն ամբողջ Միության կեդրոններուն մեջ, շնորհիվ Հայաստանի վարպետներու հմտության և արվեստին։ Ամենաբարձր որակի կոշիկները, մանավանդ կանացի, Երևանի գործարանի մը կամ արտելի մը անունը կկրեն։

Նույնը կարելի է ըսել հայ ոսկերիչներու և արծաթագործներու մասին, որոնք նույնպես կաշխատին մանավանդ Սովետական Միության մեծ կեդրոններուն համար։ Ամեն ամիս տասնյակ կիլոգրամներ ոսկի և արծաթ կհոսի Երևան և մեր վարպետները հազիվ կկարողանան աշխատիլ ստացված պատվերները։

Բացի բնական կաշիի արդյունաբերությունեն, Հայաստանի մեջ կզարգանա նաև արհեստական կաշիի ճարտարարվեստը, որուն առջև կբացվին անսահման հնարավորություններ։ Կպատրաստվին տեսակ-տեսակ պայուսակներ և հազար ու մեկ տեսակ կաշեղեն առարկաներ՝ օգտակար առօրյա գործածության։

Պետք է հիշենք նաև Երևանի կահույքի մեծ գործարանը, որ կարտադրե ամեն տեսակի և լավ որակի կարասիներ, բնակարաններու, գրասենյակներու և մեծ հաստատություններու համար։ «Ինտուրիստ» հյուրանոցի նոր և ճաշակավոր կահ-կարասիները, որ գոհացում կրնան տալ ամենապահանջկոտ ճամբորդին, արտադրությունն են Երևանի կահույքի գործարանին։

Նորաստեղծ և մեծ ապագա ունեցող ճարտարարվեստ մըն ալ մեքենակոն գործարանի արտադրությունն է (մանր ճարտարարվեստի գործարան), որ երկրին կհայթայթե տնտեսության անհրաժեշտ բազմազան մեծ ու փոքր առարկաներ, ինչպես օրինակ՝ խոհանոցի և այլ տեսակի վառարաններ, լվացարան, տնային բաղնիքներու կաթսաներ, լոգարաններ, գործիքներ և այլն։

Առանձին ճարտարարվեստ մըն է հախճապակիի և ապակիի արդյունաբերությունը, որ կպատրաստե նաև տեխնիկ-առողջապահական գործիքներ ու առարկաներ, ամաններ, ամպուլներ, ակնոցներ և այլն։

Կարևոր և հրաշալի ճարտարարվեստ մըն է Հայաստանի քիմիական արդյունաբերությունը։ Այս ճարտարարվեստին պատկանող գործարանները այլազան քիմիական նյութերե կպատրաստեն բազմապիսի գործիքներ, խողովակներ, ռեզինե առարկաներ և մեքենաներու մասեր, պլաստմասսայե շինված տնային գործածության համար ամաններ ու իրեղեններ և այլն։ Այս բոլոր քիմիական արտադրությունները կարևոր հանգամանք մըն ալ կներկայացնեն՝ այսինքն շափազանց առատ են և աժան։

Վերաշինվող Հայաստանի համար մեծ այժմեություն ունեցող ճարտարարվեստ մըն է շինանյութերու և առհասարակ շինարարական ճարտարարվեստը, որ նյութ կմատակարարե երկրի մեծ ու փոքր շենքերու կառուցումներուն։ Մանր ճարտարարվեստի բազմաթիվ գործարաններ կան, որոնք շինանյութեր կհայթայթեն այդ կառուցումներուն, իբր հում նյութ առնելով երկրին հանքային հարստությունները, ինչպես են՝ պղինձը, մարմարը, տուֆը, բազալտը, կրանիտը, մուլիտը, ֆելզիտային տուֆը և այլն։ Այս շարքին մեջ կարժե հիշել բնակարանների

ծածկի նյութ պատրաստող ճարտարարվեստը, տեսակ մը ապբեստ, որ բացառիկ հատկություններով օժտված նյութ մըն է իր նպատակին լավագույն կերպով ծառայելու համար։ Հայրենադարձներու նորաշեն բնակարանները գրեթե բոլորը ծածկված են այս տեսակի ծածկով։ Շինանյութերու ճարտարարվեստը փայլուն ընթացքի մեջ է, ինչպես առհասարակ շինարարական գմայլելի վերելքը՝ որուն մասին խոսեցա իմ նախորդ հոդվածին մեջ։

Երևանը իր այսօրվան շքեղությունը կպարտի անշուշտ այս ճարտարարվեստին։

տրամեքենաշինական՝ արդյունաբերության գործարանները, որոնք արտասովոր հառաջդիմության և արագընթաց զարգացման մեջ են վերջին տարիները։ Ասոնք գործարաններ չեն բառին սովորական իմաստով, այլ մեծ ուզինաներ, որոնք պատիվ պիտի բերեին՝ մեր ռեսպուբլիկայեն տասնապատիկ ավելի մեծ շատ մը երկիրներու։ Հայ մարդը, նույնիսկ սովետական վերածնունդի շրջանին, 10—12 տարիներ առաջ, չէր կրնար երազել իսկ թե մեր Հայրենիքը կրնա էլեկտրամեքենաշինական կեդրոն մը դառնալ սովետական ռեսպուբլիկաներու ծոցին մեջ։

Մի տեսարան Լենինի հրապարակից՝ նորակառույց շենքերով։

Մեր Հայրենիքի հոյակապ ու գեղատեսիլ շենքերը և ճարտարապետական գլուխ-գործոցները, ինչպես են Կենտկոմի պալատը, Կառավարական շենքը, Հաղթանակի կամուրջը և այլ տասնյակ ու հարյուրավոր կառույցումներ, միայն պատիվ կրնան բերել Հայաստանի շինարարական ճարտարարվեստին։ Այդ գլուխ-գործոցներուն վրա մոտ օրեն պիտի՞ ավելնա նոր մը ևս՝ այն հսկա կամուրջը՝ որ Զանգուի վրայեն պիտի անցնի 60 մետր բարձրությենե, իրար միացնելով Արարկիրի ու Բերիայի բարձունքները...

Սովետական Հայաստանի ճարտարարվեստի հսկաներու խումբին կպատկանին էլեկտրական կապելներու (պղնձալար) գործարանը, որ պղնձե զանազան տրամաչափի ու տեսակի կապելներ կպատրաստե էլեկտրաշինական մեծ ձեռնարկներու համար։ Սովետական Միության ամեն անկյուններեն պատվերներ կտեղան Երևան, որ կջանա գոհացում տալ բոլոր պահանջներուն։

Հսկա մըն է նաև հասատոցներու գործարանը, որ երեք տեսակի խառատ կշինե. ա) քար հղկելու խառատներ, բ) խառատապտուտակահան հասատոցներ, զանազան երկաթյա գործիքներ և մեքենաներու մասեր պատրաստելու համար և գ) ճշտագույն խա-

ռատա-պտուտակահան հաստոցը, Հայաստանի մեքենական ճարտարարվեստի հաղթանակներեն մին, որ մինչև 1/100 միլիմետր ճշտությամբ կկտրե, կծակե ու կհղկե զանազան մետաղներ, մեքենաներու նրբագույն մասեր և գործիքներ պատրաստելու համար։

Սովետական Հայաստանի երեսնամյակին նվիրված ցուցահանդեսին, դիտելով այս վերջին հսկա և գեղեցիկ մեքենան, նույնիսկ ոչ մասնագետի մը հիացում կպատճառե, իսկ որևէ հայ մարդու՝ արդար հպարտություն և խոր հրճվանք։

Ցուցահանդեսի սրահներուն մեջ մեզ առաջնորդող պաշտոնյան, շնորհալի օրիորդ մը, ներկայացնելով ճշտագույն խառատապտուտակահան հաստոցը, ուրախ հուզումով ըսավ՝ «Իսկ սա մեքենան մեր Հայրենիքի արդյունաբերության պարծանքն է»։

Սովետական Հայաստանը կրնա պարծենալ նաև էլեկտրամեքենաներով, զորս կշինեն երկրի գործարանները։

Թվենք այդ գործարաններու արտադրած մեքենաները՝ ա) հիդրոտուրբիններ, բ) եռաֆազ էլեկտրական հոսանքի գեներատորներ, գ) եռաֆազ էլեկտրական հոսանքի ուժային տրանսֆորմատորներ, դ) կոմպրեսորներ, ե) գյուղական էլեկտրակայանի վարման վահաններ և զ) ավտոմատ փոքր հիդրոէլեկտրակայաններ իրենց լրիվ սարքով։

Ինչպես կնկատե ընթերցողը, սույն էլեկտրամեքենաները թեև ամեն մեկը տարբեր գործարանի մը արտադրություն, բոլորն ալ սակայն սերտ կապ ունին հիդրոէլեկտրակայաններու մեծ կառուցումներուն կամ քաղաքներու և գյուղերու էլեկտրականացման հետ։

Այսպես՝ հիդրոտուրբինները այն մեքենաներն են, որ կզետեղվին ջուրի հոսանքի պառաժին մոտ կառուցված կայանին մեջ և շարժմժան մեջ կդրվին այդ ջուրի հոսանքին ուժով (ինչպես ջրաղացի մը անիվները)։ Նույն կայանին մեջ կգտնվին եռաֆազ էլեկտրական հոսանքի գեներատորները, որոնք իրենց կարգին հիդրոտուրբիններու միջոցով շարժման մեջ մտնելով առաջ կբերեն, ծնունդ կուտան էլեկտրական ուժին (գեներատոր կնշանակե ծնունդ տվող)։ Այդ էլեկտրական մեծ ուժը, բարձր հոսանքի ուժ, էլեկտրական պղնձյա երեք թելերու միջոցավ կփոխադրվի ու կբաշխվի հարյուրավոր, հազարավոր կիլոմետրներու հեռավորության վրա գտնվող քաղաքներու, գյուղերու, գործարաններու և այլն, ուր որ կարիք կա էլեկտրական հոսանքի։

Սակայն քաղաքներն ու գյուղերը կամ գործարանները չեն կրնար ուղղակի կերպով օգտագործել այդ բարձր հոսանքի էլեկտրական ուժը, այլ անհրաժեշտ կդառնան այն մեծակառույց էլեկտրական հատուկ մեքենաները, որոնք էլեկտրական բարձր հոսանքը կվերածեն ցած հոսանքի, օրինակ՝ 100.000 վոլտնոց էլեկտրական հոսանքը, 5.000 վոլտնոց կամ 220 վոլտնոց հոսանքի։

Այդ էլեկտրամեքենաներն են, որ կկոչվին եռաֆազ էլեկտրական հոսանքի տրանսֆորմատորներ։ Եռաֆազ՝ որովհետև էլեկտրական հոսանքը կխոփադրվի վերև հիշված երեք էլեկտրական թելերու միջոցավ։ Կան և տրանսֆորմատորներ, որոնք կծառայեն էլեկտրական ցած հոսանքը վերածելու բարձր հոսանքի։

Կոմպրեսորները այն մեքենաներն են, որոնք գազային մարմնի մը ճնշման ուժը կբարձրացնեն հատուկ նպատակներով, օգտագործելու համար զայն արդյունաբերության, օդանավաշինության և այլ ճարտարարվեստներու մեջ։

Գյուղական էլեկտրակայանի վարման վահանները մետաղյա մեծ պահարաններ են, օժտված բազմաթիվ էլեկտրական մեքենաներով և էլեկտրաչափիչ այլազան գործիքներով (ժամացույցներու նմանող), որոնք գյուղերու էլեկտրաբաշխիչ կեդրոնները (կայանները) կզետեղվին ըստ պահանջին՝ զեկավարելու և կանոնավորելու համար էլեկտրական հոսանքի մատակարարությունը, ճշտությամբ և ապահովությամբ։

Վերջապես, վերոհիշյալ ավտոմատ փոքր հիդրոկայան կոչված բարդ մեքենական կառուցվածքը, ամբողջ սարքավորում մըն է՝ հիդրոտուրբիններու, էլեկտրական գեներատորի և տրանսֆորմատորի, որ օգտագործելի է գյուղական փոքր էլեկտրակայաններուն համար, տեղական էլեկտրական համեստ պահանջները բավարարելու նպատակով։

Ահա այս բոլոր տեսակի էլեկտրական բարձրորակ մեքենաները կկառուցվին Հայաստանի ուզինաներու մեջ և ամեն օր այդ գործարաններեն նման հսկա մեքենաներ կառաքվին դեպի Սովետական Միության զանազան շրջանները։ Իմ Երևան գտնված ատեն, հաճախ կկարդայի տեղական թերթերուն մեջ, Հայաստան ստացված մեծ պատվերներու մասին՝ Ղրիմի, Հարավային Ուկրաինայի և Կեդրոնական Ասիո մեծ կառուցումներու կեդրոններեն։

Սովետական Հայաստանի էլեկտրամեքենաշինական ճարտարարվեստը կարտադրե նաև էլեկտրաչափիչ զանազան գործիքներ, ինչպես են՝ վոլտմետր, վատմետր, ամպեր-

մետր, հիդրոմետր, ավտոմատ սիգուրանցա (ապահովիչ) և այլ էլեկտրական գործիքներ։

Ի տես մեր երկրի ճարտարարվեստի այս հաղթանակներուն, ինչպե՛ս չհիանալ ու չհրճվիլ որպես հայ մարդ։

Մեր Հայրենիքի այսօրվան շինարար սերունդը, տարիներ հետո երբ կյանքին հրաժեշտ տա, դիտելով իր ստեղծած գործը, արդար հպարտությամբ ու խոր մխիթարությամբ պիտի կարենա ըսել՝ չէ՛, մենք իզուր չապրեցանք մեր կյանքը։

Նորակառույց բնակելի շենք Ստալինյան պողոտայի վրա

***

Օգոստոսի 2-ը ինձ համար եղավ հիացումի և լուրջ խորհրդածության օր մը, երբ օծակից սրբազան եղբայրներուս հետ միասին, այցելեցինք Երևանի ճարտարարվեստի հսկաներեն՝ տրանսֆորմատորներ ու գեներատորներ կառուցանող ուզինան։

Այս ուզինան, որ հազիվ հինգ տարիներու կյանք մը ունի, հսկայական հողամասի մը վրա կտարածվի։ Շրջապատված է պարիսպներով։ Մուտքին՝ հսկա երկաթյա դուռ մը՝ գեղարվեստական ճաշակով աշխատված։ Ներսը կգտնվին բազմաթիվ միհարկանի բարձրակառույց շենքեր, որոնք բուն իսկ աշխատանոցներն են։ Կան նաև երկհարկանի և երեքհարկանի մեծ շենքեր, որոնցմե մեկը վարչության գրասենյակները կգրավեն, իսկ մյուսները՝ ճաշարան, խոհանոց, բաղնիք, բուժարան և բնակարանային շենքեր են։

Հաստատությունը ունի մարզադաշտ, բացօթյա լողարան։

Այս հսկային արտադրության մասին գաղափար մը կազմելու համար, հաստատության փոխ-տնօրենը մեզի կհայտնե թե մեկ ամսվան մեջ իրենց կառուցած էլեկտրամեքենաներով, կարելի է կատարել հազար գյուղերու էլեկտրական սարքավորումը։

Անհամբեր, սրտատրոփ մտանք աշխատանոցներեն ներս։ Այցելեցինք բոլոր բաժինները։ Նախ այն սրահները, ուր կպատրաստվին մեքենաներու զանազան մասերը և ապա այն սրահները, ուր տեղի կունենան մեքենաներու կազմավորումը և ծրարումը։

Ամեն սրահի մեջ մեզի կմոտենա համապատասխան բաժնի ինժեներ-պետը ու մեզի բացատրություններ կուտա։ Մեր անցքի

ընթացքին, բանվորներն ու վարպետները պահ մը իրենց աշխատանքը կդադրեցնեն ու համակրանքով ու ժպիտով կդիտեն մեզ։ Շատերը կմոտենան։ Երբ մենք կանգ կառնենք աշխատող հսկա մեքենաներու առջև, բանվորները հպարտության զգացումով մը լեցված և քիչ մըն ալ հուզված՝ կշարունակեն իրենց աշխատանքը, ցույց տալով իրենց հմտությունն ու ճարտարությունը։ Բոլոր բաժիններուն մեջ կան բազմաթիվ հայրենադարձ բանվորներ ու վարպետներ նույնիսկ։ Կաշխատին նաև երիտասարդ կիներ, ավելի թեթև աշխատանք պահանջող գործերու վրա։

Վերջին սրահներեն մեկուն մեջ մեզի ցույց կտրվի նորաձև հսկա մեքենա մը, փոքրիկ տունի մը մեծությամբ։ Նոր տեսակի տրանսֆորմատոր մըն է աս, զոր կարելի է կոչել նաև շարժական էլեկտրակայան։ Այս մեքենան, ինչպես ըսինք, տեսակ մը տրանսֆորմատոր է, որ, բարձր հոսանքի էլեկտրական ուժը ստանալով՝ կվերածե զայն ցած ատիճանի հոսանքի, շարժման մեջ դնելու համար արտերը հերկող էլեկտրատրակտորները։ Ամեն մի այսպիսի շարժական էլեկտրակայան, ուղիղ գծով, մինչև 1.500 մետր հեռավորության վրա, կրնա շարժման մեջ դնել էլեկտրատրակտորներ, որոնք շուրջ 10.000 հեկտար հող կրնան հերկել։

Շարժուն էլեկտրակայանը սովետական նոր հղացում մըն է և զայն առաջին անգամ կառուցանելու պատիվը կպատկանի Երևանի տրանսֆորմատորներու և գեներատորներու գործարանին։ Ահա ուրեմն օրինակ մը ևս, թե մեր երկիրը ինչպես մեծ չափերով կմասնակցի Սովետական Միության էլեկտրականացման հսկա ծրագիրներուն, որոնք մոտ ատենեն պիտի կերպարանափոխեն մարդկային կյանքը ու ամբողջ Միության տնտեսությունը։ Թեև, այս էլեկտրական հրաշագործ մեքենաներու և գործիքներու հայկական արտադրությունը կոչված է կարևոր չափով մը բավարարելու ամբողջ Միության կառուցումներու պահանջը, սակայն բնական է թե առաջին հերթին ան օգտակար կդառնա մեր Հայրենիքին։ Եվ իրոք, Հայաստան այսօր մեծ չափով էլեկտրականացած երկիր մըն է։ Էլեկտրականությամբ լուսավորված են բոլոր քաղաքներն ու գյուղերը։ Էլեկտրականությամբ՝ ջերմություն կստանան բազմահազար տնտեսություններ և հասարակական հաստատություններ։ Էլեկտրականությամբ կշարժին ուզինաներու, գործարաններու և արտելներու մեքենաները։ Էլեկտրականության ուժի շնորհիվ կոռոգվին դաշտերը։ Էլեկտրականությամբ շարժման մեջ կդրվին շոգեկառք, հանրակառք, տրոլեյբուս և այլ փոխադրական միջոցներ, իսկ մոտ ատենեն, ինչպես տեսանք, տրակտորներ և այլ հողագործական մեքենաներ ևս պիտի աշխատին նույն ուժին շնորհիվ։

Մոտ ժամանակին, եթե կառուցվին նաև մյուս ծրագրված հիդրոկայանները Զանգուի հոսանքին վրա, Սևանա լճի ջուրերու օգտագործմամբ, այն ատեն երկիրը պիտի ունենա անսահման հնարավորություններ էլեկտրական հոսանքի տեսակետեն։ Կրնանք այժմեն ըսել արդեն թե՝ Երևանը դարձած է Հայաստանի էլեկտրականության սիրտը։

Հիդրոկայաններու կառուցումով, էլեկտրական ուժի աճման զուգընթաց, երկիրը կստանա նաև առատ ջուր՝ ջրանցքներու ցանցի ընդլայնումով և տարածումով։ Կար ժամանակ երբ Հայաստանի հողերը մեռած ըլլալ կթվեին, մինչդեռ անոնք ոչ թե մեռած էին, այլ ծարավե շորցած, անկենդան դարձած էին։

Այդ նույն երկիրը, շնորհիվ ճարտարարվեստին, շնորհիվ իր հիդրոկայաններու և ջրանցքներու մեծ կառուցումներուն, այսօր ի վիճակի է 250.000 հեկտար հող ոռոգելու (ընդամենը 450.000 հեկտար մշակելի հողեն)։ Իսկ Սևանի ջուրերն օգտագործելու ծրագրով, հնարավոր պիտի ըլլա 200.000 հեկտար հող ևս ոռոգել։ Այդ ծրագրին համաձայն, լճի ջուրերը մինչև որոշ տեղ քաշվելով, նոր և բերրի հողամասեր երևան պիտի գան, ու կնախատեսվի թե շուրջ 100.000 հեկտար տարածություն պիտի ունենան։ Ուրեմն քանի մը տարիներ հետո, Հայաստանը իր այսօրվան 450.000 հեկտար մշակելի հողին տեղ, պիտի ունենա մոտավորապես 750.000 հեկտար մշակելի հող, որուն 550.000-ը պիտի պարտինք Սևանին և Սևանեն բխող Զանգուին։

Սխալ պիտի չըլլա ըսել թե՝ մեր վերածնած ու վերակառուցված Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, իր հողամշակությամբ ու ճարտարարվեստով, պարգևն է՝ իր 60 միլիարդ խորանարդ մետր անսպառ ջուր պարունակող քարե այն երկնամերձ հսկա սկիհին, որ կկոչվի Սևանա լիճ, պարգևն է՝ սովետահայ շինարար մարդուն, պարգևն է՝ մեր երկրին մեջ այժմ տիրող ապահովության, հառաջդիմության և խաղաղության պայմաններուն։

Ահա թե ինչո՛ւ մենք՝ հայերս ի սրտե կցանկանք ու ի տվե և ի գիշերի կաղոթենք մեր Մայր Հայրենիքի կյանքի ապահովության, հառաջդիմության ու ամբողջ աշխարհի խաղաղության պահպանման և ամրապնդման համար։

Ով որ կդդա հարազատ հայու նման, ան կհասկնա բանաստեղծին խոսքը՝

«Խաղաղությունը բառ չէ ինձ համար,
և ոչ էլ կոչեր,
Նա Սովետական իմ Հայրենիքն է
խաղաղ ու արդար»։

Պատմության ընթացքին ամեն անգամ, երբ հայ ժողովուրդը երջանիկ բարեշրջումի, ազգային վերածնունդի կամ հոգևոր-մշակութային ծաղկման շրջան մը ապրած է, մեր պատմիչները կոչած են զայն «լուսավորության շրջան», իսկ այդ վերածնունդը կերտողները՝ «լուսավորիչներ»։

Այսօր մեր ժողովուրդը վերստին կապրի լուսավորության և նոր լուսավորիչներու դարաշրջան մը։

Հարյուրավոր տարիներ տևող խավարեն, ավերումներեն ու ծով արյուն-արցունքներեն վերջ երբ կդիտենք այսօր կենսուրախ դեմքը մեր վերաշինված Մայր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, անհնար է հայ ըլլալ ու չհրճվիլ ու չօրհնել այն լուսաբեր արշալույսը, որուն շողակաթումին ներքև հայ ժողովուրդը իր նոր կյանքը սկսած է ապրիլ, իր պատմական Հայրենիքի սրտին վրա։

Երկու ամիս Երևան մնալով, մենք՝ արտասահմանեն մեր երկիրը այցելող հոգևորականներս, գաղութահայուն հատուկ ծարավով, անհագորեն ըմպեցինք կենաց ջուրը մեր հայրենի զուլալ աղբյուրեն, և սքանչացումով ըմբոշխնեցինք լույսը, որ ծագած է ի Հայաստան աշխարհի։ Տեսանք հիմնովին վերաշինված, գունազարդ, շքեղ Երևանը, ականատես եղանք երկրի տնտեսական վերելքին, ճարտարարվեստի զմայլելի զարգացման, գիտական, գրական ու գեղարվեստական ծաղկման, շոշափելիորեն տեսանք բարօրությունը և աճը մեր ժողովուրդին,

Նորակառույց բնակելի շենք Ստալինյան պողոտայի վրա

մեր պատմիչները կոչած են զայն «լուսավորության շրջան», իսկ այդ վերածնունդը կերտողները՝ «լուսավորիչներ»։

Այսօր մեր ժողովուրդը վերստին կապրի լուսավորության և նոր լուսավորիչներու դարաշրջան մը։

Հարյուրավոր տարիներ տևող խավարեն, ավերումներեն ու ծով արյուն-արցունքներեն վերջ երբ կդիտենք այսօր կենսուրախ դեմքը մեր վերաշինված Մայր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, անհնար է հայ ըլլալ ու չհրճվիլ ու չօրհնել այն լուսաբեր արշալույսը, որուն շողակաթումին ներքև հայ ժողովուրդը իր նոր կյանքը սկսած է ապրիլ, իր պատմական Հայրենիքի սրտին վրա։

Երկու ամիս Երևան մնալով, մենք՝ արտասահմանեն մեր երկիրը այցելող հոգևորականներս անոր սրտին զարկը՝ առողջ ու աշխույժ, և զգացինք, անհուն մխիթարությամբ զգացինք՝ հոգին սովետահայ մարդուն, որ ջլապինդ բազուկներով, տենդագին՝ իր հայրենի նոր տունը կշինե, կշենցնե, և վառ հույսերով զեղուն՝ իր այդ ջերմ հոգիին մեջ գտանք պայծառ գիտակցություն մը՝ մեր ներկա ազգային վերածնունդի նկատմամբ, աշխատելու, շինելու, զոհաբերելու անայլայլ կորով ու վճռական կամեցողություն, ինչպես նաև խոր երախտագիտության և պաշտամունքի հասնող սեր՝ հանդեպ ռուս եղբայր ժողովուրդին ու հանդեպ սովետական իշխանության, որոնք հայ ժողովուրդը փրկեցին անդունդի եզերքեն, զայն վերստին նոր և լուսաշող կյանքի մը կոչելով։

Բազմաչարչար հայ ազգը այս ուղիով

միայն գտավ՝ ազատություն, խաղաղություն, կյանքի ապահովություն, ինչպես նաև վերաշինության ու հառաջդիմության անհրաժեշտ պայմաններ։

Հայ հոգին մեջ կարդացի ամրակուռ, անխորտակելի հավատք՝ հանդեպ սովետական կարգերու, հանդեպ սովետական խաղաղասեր ուժերու անհաղթելիության, հանդեպ սովետական աշխարհի փառահեղ ապագային։

Եվ նույնպիսի ամրակուռ և անխորտակելի հավատք տեսա մեր ժողովուրդի հոգվույն մեջ՝ հայ ազգի արդար ու սրբազան իդեալներու իրականացման, ամբողջական ազգահավաքի, հայ ժողովուրդի միասնականության ու Հայրենիքի ծաղկյալ և լուսավոր ապագային նկատմամբ։

Այս գիտակցությամբ, այս զգացումներով, այս կամեցողությամբ պարսպված են մեր մայր ժողովուրդի հարազատ զավակներուն հոգիները։ Հայոց աշխարհի մեջ ճառագայթող լույսերը ա՛լ պիտի չմարին, ա՛լ պիտի չշիջին երբեք, վասնզի մեր ժողովուրդը՝ հավաքված իր հայրենի երկրին մեջ, ստեղծած է նոր կյանք մը, հայկական պետություն մը, և վասնզի ան, իր նոր օրերու բախտը կապած է ռուս մեծահոգի, բարի և հզոր ժողովուրդին, սովետական ժողովուրդներու ծոցին մեջ։

Մեր այս ճանապարհորդությենեն վերջ, անդամ մը ևս ամրացավ ու բյուրեղացավ մեր համոզումը թե՝ ի վերջո պիտի ապահովվի խաղաղությունը ամբողջ աշխարհի վրա և մեր Սովետական Հայրենիքը պիտի կարողանա ամբողջական կերպով ի կատար ածել իր շինարար ու ժողովրդանվեր ծրագիրները, և մոտ ատենեն, վերստին պիտի հնչե ազգահավաքի փրկարար փողը, ու մեր Սփյուռքի ցիրուցան ժողովուրդը, նոր քարավաններ կազմած, պիտի դիմե դեպի մեր արևոտ Մայր Երկիրը, դեպի Սովետական հարազատ Մայր Հայաստան։

Մեր ժողովուրդի կյանքի բոլոր ճանապարհները այսօր լուսավորված են։

Երեկո մը, էջմիածնեն մեր վերադարձին, մեր ավտոները առաջ քշեցին Աբովյան պողոտայեն դեպի վեր, բարձրացան Սևանա լիճ տանող օձապտույտ ճամբով և մեզ տարին Մեծ Առաջնորդին հսկա արձանին մոտ։ Գիշեր էր։ Բարձունքեն դիտեցինք Երևանը։ Կախարդված էինք բոլորս, ի տես այն հոյակապ տեսարանին, որ կպարզվեր մեր աչքերուն առջև։

Երևանը լույսերո՞ւ մեջ, ծով լույսերու մեջ կշողար անծայրածիր տարածության մը վրա, մինչև հորիզոն և հորիզոնեն ալ անդին։ Լույսերու ալիքները կբարձրանային հոն, հեռուն, մինչև երկինք, ու երկնակամարի աստղերը կարծես Արարատյան դաշտի լույսերուն դեպի վեր շարունակությունը ըլլային։

Քաղցր, անանուն հուզումներ հորձանահոս կողողեին մեր հայու հոգիները։ Սքրտատրոփ ու լուռ երկար մնացինք հոն և հափշտակված դիտեցինք առանց հագենալու։

Ժամանակը կանգ էր առած այդ գիշեր...

Հոգվույս մեջ ձայն մը, մեր շարակնոցեն կերգեր անձայն, «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։

Ո՞վ պիտի ժպրհեր շիջել այդ մեր լույսերը, ո՞վ պիտի հանդգներ մարել մեր կյանքի ջահը։

Երևան, Էջմիածին, Օշական, Դիլիջան, Սևան ու Արզնիի մեջ բազմաթիվ անգամներ առիթն ունեցա մոտենալու ժողովուրդին։ Խոսքի նստա շատ շատերու հետ, բնիկներու և հայրենադարձներու հետ, հարցուփորձ ըրի, և ճանչցա ու հասկցա Հայաստանցի հայ մարդու հոգին։ Հոն, խաղաղ ու արդար կյանքի երգը կհյուսե իր լուսեղեն ապագային ի խնդիր։

Հայաստանը այսօր լույսի աշխարհ է, հույսի աշխարհ է։

Այդ լույսն է, որ առատապես կբաշխվի հայ դպրության ամբիոններեն և ժողովուրդի դաստիարակության սատարող հաստատությանց բեմերեն, ինչպես նաև նյութական լույսը, որ նույն առատությամբ կբաշխվի աշխարհի բոլոր շինականներուն հավասարապես, գյուղերուն ու քաղաքներուն։